

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 հունիսի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության եւ Սիրիայի Արաբական Նանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 25.05.2010թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ արդարադատության

նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Նայասփանի Նանրապետության եւ Սիրիայի Արաբական Նանրապետության միջեւ համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի մարտի 23-ին:

2. Նշված համաձայնագրի նպատակն է ամրապնդել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն փրամադրելու իրավական հիմքերը:

Նամաձայնագիրը փարածվում է հանցագործությունների կատարման առնչությամբ հեղափոխությունների, քննությունների եւ դատական ընթացակարգերի վրա՝ համաձայն երկու Կողմերի օրենսդրության:

Նամաձայնագրով Նայասփանի Նանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ՆՆ օրենսդրությանը համապատասխան փրամադրել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն այն դեպքում, եթե արարքը, որի համար հարցում է ներկայացվել, քրեորեն պատժելի է երկու Կողմերի օրենսդրությամբ (հոդված 1, կետեր 1, 2),

- իր հայեցողությամբ փրամադրել իրավական օգնություն նաեւ այն դեպքում, երբ արարքը, որի համար հարցում է ստացվել, ՆՆ օրենսդրությամբ քրեորեն պատժելի չէ (հոդված 1, կետ 2),

- իրավական օգնության շրջանակներում ընթացակարգային փաստաթղթեր հանձնել, ապացույցներ ստանալ, անձանց եւ առարկաների գտնվելու վայրը եւ ինքնությունը հաստատել, հայցող Կողմի իրավասու մարմինների կամավոր ներկայանալու համար վկաներ, փուժողներ եւ փորձագետներ հրավիրել (հոդված 2, կետեր 1-4),

- միջոցներ ձեռնարկել՝ կապված գույքի պաշտպանության հետ (հոդված 2, կետ 6),

- նշանակել կենտրոնական մարմին, ՆՆ-ի համար կենտրոնական մարմին է հանդիսանում ՆՆ գլխավոր դատախազությունը եւ ՆՆ արդարադատության նախարարությունը (հոդված 3),

- հարցումները եւ լրացուցիչ փաստաթղթերը գուգակցել հայցվող Կողմի լեզվով կամ անգլերենով հաստատված թարգմանությամբ (հոդված 5),

- բանկային գաղտնիքին կամ հարկման գաղտնիության հետ կապված իրավական օգնություն փրամադրել հայցվող Կողմի օրենսդրության համաձայն (հոդված 6, կետ 2),
- չմերժել ահաբեկչության հանցագործությունների հարցով իրավական օգնությունը՝ ՆՏ եւ Սիրիայի Արաբական Նանրապետության մասնակցությամբ գործող միջազգային եւ փարաձաշրջանային կոնվենցիաների համաձայն (հոդված 6, կետ 2),
- Սիրիայի Արաբական Նանրապետության կենտրոնական կամ իրավասու մարմինների կնիքով հաստատված՝ համաձայնագրի համապատասխան փաստաթղթերն ընդունել առանց օրինականացման ընթացակարգերի կամ վավերականության հաստատման այլ ձևերի (հոդված 7, կետ 1),
- գաղտնի պահել սիրիական Կողմի հարցման հիման վրա՝ իրավական օգնության համար հարցումը, դրա բովանդակությունը, լրացուցիչ փաստաթղթերը եւ հարցման համաձայն կատարված ցանկացած գործողություն, ինչպես նաեւ նման օգնություն փրամադրելու փաստը (հոդված 8, կետ 1),
- ՆՏ փարաձքում վերցնել վկաների եւ փուժողների վկայություններ, փորձագիտական եզրակացություններ, փաստաթղթեր, իրեր, հարցման մեջ նշված այլ վկայություններ եւ փոխանցել սիրիական Կողմին (հոդված 11, կետ 1),
- ՆՏ իրավունքին համապատասխան իրավասու մարմինների օգնությամբ օգտագործել բոլոր հնարավորությունները՝ պարզելու համար հարցման մեջ նշված անձանց ինքնությունը եւ իրերի գտնվելու վայրը (հոդված 12),
- հանագործակցել հանցագործության գործիքների եւ հանցավոր գործունեությունից սրացված եկամուտների բացահայտման, ինչպես նաեւ դրանց հետ կապված համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու ուղղությամբ (հոդված 17, կետ 1),
- որպես հայցվող Կողմ իր փարաձքում կրել իրավական օգնության համար հարցման կատարման սովորական ծախսերը, բացառությամբ այն ծախսերի, որ կրում է հայցող սիրիական Կողմը (հոդված 18, կետ 1),
- վճարել որպես հայցող Կողմ դեպի իր փարաձք եւ իր փարաձքից անձանց փեղափոխման հետ կապված ծախսերը, փորձագետի ծախսերն ու վճարները, փոխանցված առարկաները հայցվող Կողմի փարաձքից հայցող Կողմի փարաձք եւ հեփադարձ փեղափոխման հետ կապված ծախսերը (հոդված 18, կետ 1),

- համաձայնագրի մեկնաբանումից եւ (կամ) կիրառումից ծագած վիճահարույց հարցերը լուծել դիվանագիտական բանակցությունների միջոցով՝ երկու Կողմերի կենտրոնական մարմինների ներգրավմամբ (հոդված 19, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի մարտի 23-ին Դամասկոսում ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության եւ Սիրիայի Արաբական Նանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 հունիսի 2010 թվականի
ՍԴՈ- 895